

կոտորածներու ցուցակը ի յունաց եւ ի պարսից, իորս եւ պապուս ժամանակէն դրուած ճշտութեամբ: Բայց ո՞ւմ է յանցանքը, մեռնողի՞ն թե՞ մեռցնողին:

— Երկուքին հաւասար: Ես իոս Կարին՝ այս պաշտօնիս մէջ աւելի բան իմացայ մեր երկրին վերաբերութեամբ, քան թէ ինչ որ իմացեր էի այնչափ տարի Բեօլզանդիոյ արքունեաց մէջ: Այս Կարնոյ դիւանատան մէջ գտայ թղթակցութեանց շարք մը պարսից եւ յունաց մէջ, Մօրիկ կայսեր եւ Խոսրովու ժամանակի. տե՛ս թէ ինչպէ՛ս իրարու հետ կը խօսին:

Եւ այս ըսելով Երիզագին հանեց թուղթի մը օրինակ եւ տուաւ Ռշտունուն, որ լռութեամբ կ'արդալէն վերջ այդ ուղթը, ուր յոյնը կը գրեր պարսկին՝ հայոց համար. «Խոտոր եւ անհնազանդ ազդ մի են, մեր մէջ կացած պղտորութիւն կը ձգեն: Բայց եկ, ես ինձ հնազանդեալքը կը ժողուեմ եւ Թրակիոյ կողմն կանցնիմ հոնաց եւ նմանեաց հետ պատերազմելու համար. դու քուկիներուդ հրամայէ ժողուել եւ Արեւելք տանիր Վասնզի եթէ մեռնին՝ թշնամիք կը մեռնին, եւ եթէ սպաննեն զթշնայմիս կը սպաննեն, եւ մենք խաղաղութեամբ կապրինք: Չի եթէ դոքա իրենց երկրին մէջ մնան՝ մենք հանգստութիւն չպիտի գտնենք»: Բարձր ձայնով կարդաց երկրորդ անգամ եւ հեզնական ծիծաղով ըսաւ.

— Ողորմելի՛ քաղաքագիտութիւն, որ իւր ներքին վիճակը չի տեսներ, եւ ուրիշին թշուառութենէն օգուտ քաղել կը կարծէի աշխարհք մը կոչնչացնէ, եւ իւր անձին զօրութիւն չի գտներ եւ աւելի կը տկարացնէ: Խոսրով այդ նամակի իմաստը յայտնած էր Սմբատայ: Բայդ դժբախտաբար Յայաստանի համար՝ եւ Խոսրովու իւր անձին համար, Սմբատ շուտ մեռաւ, եթէ ոչ ինչ գեղեցիկ ու մեծ խորհուրդներ ունէր այդ մեծ՝ մարդը, որ քուշանաց զօրութիւնը ճախջախելէն վերջ, Յայաստանի վերականգնութեան խոստմունքն առած էր արքայից արքայէն: Եւ այն՝ ինչ որ ես տկար ձեռք կը փափագիմ գործել, նա հզօր ձեռք ապահով ի գլուխ կը հանէր. բայց մահը ամեն խորհուրդ առաւ տարաւ...

— Յիմա էլ իւր որդուն՝ Ասպետին մահը ամեն յոյսեր փչացուց:

— Ի՞նչ ընենք. քանի որ շունչ ունինք պետք է աշխատինք: Բայց դու որոշած էիր երթալ:

— Ուրիշ ի՞նչ Կարելի է ընել...

Մտախոհ լռութիւն յաջորդեց այս խօսակցութեան, երբ մասնաւոր սուրհանդակ մը Երիզացուն թերաւ նամակ մը, որ կ'իմացներ Նոր-Նոր դաւանութիւնք, Նոր բանտարկութիւնք եւ Նոր արեանց հեղմունք, այնպէս որ ժամանակին